Կորուսյալ ինքնության որոնումներում

<<Անհատ- հասարակություն>> փոխառնչության հիմնախնդիրը հազարամյակների տևականություն ունի.կորսված կապի պատճառները տարաբնույթ են՝պայմանավորված տվյալ հանրության էթնոհոգեբանության,հոգեկերտվածքի,սոցիալ-քաղաքական զարգացումների ընթացքով:

Ա.Թոփչյանի <<Անհետացում>> վեպի հիմքում դրված է բարդագույն հոգեբանական հիմնախնդիր՝ինքնօտարման և ինքնավերադարձի դրամատիկ զարգացումների էթնոսոցիալական արմատների բացահայտումը:

- Իրեն ծնող միջավայրի նույն գենոտիպի և հոգեկերտվածքի կրողներից միտումնավոր դուրս է մղվում սեփական կենսագրությունից և հայտնվելով ներփակ օղակի հեղձուցիչ մթնոլորտում `սեփական ինքնության իրացման նոր տարածք փնտրում:Երևույթը հայկական իրականության մեջ բարձր հաճախականությամբ կրկնվող հոգեբարոյական ահաբեկչություն է .արդյունքում ոչ թե հատուկենտ անհատներ անհատներ,այլ մի ամբողջ ազգ սոցիալական արդարության և ժողովրդավարական արժեքների որոնումներում լքում է հայրենիքը:

Անհատականության ինքնապաշտպանական զինանոցում վճռական նշանակություն է ստանում հրաժարումը սեփական դեմքից և համոզմունքներից

- Վեպու մ դիմափոխությունը իրագործվում է ուղիղ իմաստով.հերոսուհին՝հայտնի դերասանուհի Ա.Թ-ն ենթարկվում է պլաստիկ վիրահատության՝ձանձրացած իր նախկին դեմքից և կրավորական զոյապայմաններից:

Մարդու պաշտպանվածության ցածր որակը և ստեղծագործական ազատության պակասը դիմազրկում են հասարակությունը:

Ա.Թ.-ի դիմափոխությունը մկրատված կենսագրությանը պատառիկները վերականգնելու ,քողարկված ճշմարտությունը բացահայտելու հուսահատ ճիգ է:

Ա.Թ-ի հետ զրույցի ընթացքում բժիշկը հայտնագործում է առողջ մարդու հոգեկերտվածքին անհարիր,սակայն հայոց կոլեկտիվ ենթագիտակցությանը բնորոշ ախտաբանական վիճակ՝վախը անկեղծ ու բաց արտահայտվելու և անհուսությունը ապագայի հանդեպ:

Ուրիշի կերպարանքի տակ ծպտվելը Ա.Թ.-ին արտահայտվելու և իրականության ծամածռված պատկերը վերականգնելու հնարավորություն են ընձեռում `սեփական եսը անհետացնելու և ազգային ինքնությունը վտանգելու գնով: